




ՄԱՆՇՏՈՅ ԱՐԵՂԱ ԹԱՂԻՐՅԱՆ

Ն Ա Հ Ա Տ Ա Կ Կ Ո Ւ Յ Ս Ե Ր Ը

(հոսոված Ս. Շողակարի եկեղեցում, 1956 թ. մայիսի 31-ին)

«Սկայլ հաւատացեալ զեցեոյրինս սոցա հոշակեցուի.
և օրհնուրեամբ զԱստուած փառաւորեցուի»:

ՇԱՐԱԿԱՆ Ս. ՀՈՒՓՍԻՄԵԱՆՑ



յսպիս է երգում երջանկահշա-տակ Կոմիտաս կաթողիկոսը Հոփսիմյանց կույսերի մարտիրոսութունը իր «Անձինք նուիրեալք» շարականով, որն իր ոճի զեղեցկութեամբ, կրոնա-բարոյական արժեքներով կարող է մրցել նույն կույսերի հիշատակը հավերժացնող հայրապետի բարեպաշտ մտքի հղացումը հանդիսացող հայ ճարտարապետական արվեստի գոհարներից մեկի՝ Ս. Հոփսիմեի տաճարի հռչակապ կառուցվածքի հետ:

Այդ երկու վեհապանծ կոթողներով մեր մեծագործ Հայրապետը մի անգամ ևս շեշտեց քրիստոնեական լուսավոր հավատի համար գոհված այն սուրբ կույսերի մարտիրոսութունը, որ արդեն սրբագործված էր Ս. Գրիգոր Լուսավորչի հրաշագեղ տեսիլքով:

Ո՞րն է այն հողը, որի վրա իջան մեր պատմական Հայրապետ Գրիգոր Լուսավորչի տեսած լուսաշող կամարները, ո՞ր տեղից էին սկսում նրանք և ի՞նչ էին նշանակում:

Այդ այն հողն էր, որի վրա մենք ենք կանգնած և մեր նախնայաց ջերմեռանդ հավատով աղոթում ու գովերգում ենք Հոփսիմյանց կույսերի զերազույն գոհարերու-թյունը, որոնք «ժուժկալեալք փորձութեանց և պէսպէս լիկանաց, եղեալք ժառանգորդք անթառամ պսակին»: Իսկ լուսաշող կամար-

ների իմաստը մեզ տալիս է հայ մատենա-գրութեան առաջին ներկայացուցիչը՝ Ազաթանգեղոսը: Նա ասում է, որ այդ լուսաշող կամարները, որ Ս. Գրիգորի տեսիլքի մեջ երևացին, կանգնած էին շորս սյուների վրա: Շողը՝ սկսում էր ճիշտ այս կետից, այսինքն Շողակաթի տաճարից, որտեղ թափվել էր սուրբ կույսերի արյունը և շարունակվում էր մինչև այն կետը, ուր գտնվում էր Ս. Հոփսիմեի մարմինը, որի վրա էլ երևում էր հրե-զեն սյունը: Լույսի շողը այնտեղ կանգ չէր առնում, այլ տարածվում էր մինչև Ս. Գա-յանեի մարմնի գտնված տեղը և շարունակ-վելով հասնում էր այն կետին, ուր էջմիա-ծինն է կանգնած դարերից ի վեր: «Սկայք շինեցուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշ-խարհի»: Եվ այս տեսիլքով առաջնորդվելով, Գրիգոր Լուսավորիչը կառուցեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Գայանեի, Հոփսիմեի, Շո-ղակաթի տաճարները: Այս աստվածային շո-ղը լուսավորեց Հայաստան աշխարհը և հայ ժողովուրդը ընդունեց քրիստոնեություն: Ահա այն հունձը, որ տվեց սուրբ կույսերի արյու-նով շաղախված հայոց հողը, «բառնալով յխաւար դիւապաշտ մոլորութեանց յաշ-խարհէ»:

Ս. Կույսերի քրիստոնեական հավատի հա-մար մարտիրոսացումը և աստվածային հրա-

շալիքը ոչ միայն ամրապնդեցին հայ ժողովրդի մեջ քրիստոնեական կրօնը և նրա բարոզած բարոյականությունը, այլև այն հավատով գտակարեցին հայ կիներ բարոյական այն մեծ ուժով, որ նա հայտնարեցի իր ընտանեկան պատմասիրության, իր հավատի և Եկեղեցու և իր հայրենասիրության մեջ:

Ի պարժանս հայ կանանց պետք է ստել, որ նրանք շարունակ «մերժեցին» զկարիս մարմնական կենցաղոյս, զի ծանեան եթէ երազ է սուտ պաճուճանք. ոչ հեշտացան ի զրգանս փափկութեան, իմացան, եթէ անտի է անցաւոր մեծութիւնս»:

Ահա այսպիսի հավատով զինված, հայ կիներ պահպանեց իր ընտանեկան պատիւը, մարտեց դարեր շարունակ բռնության դեմ, կուրծք տվեց աշխարհի ցեղերի արշավանքներին, թափեց իր արշունք, պահպանելով իր հոգու մեջ առաքինության, սրբազորձ սիրո և զոհարեւութեան խորհուրդը:

Արդ, պահպանենք Հոսիփսիմյանց սուրբ կույսերի անմահ հիշատակը, ունենալով մեր հոգու խորքում նրանց պաշտած Քրիստոսին, պահենք Քրիստոսի պատվերները և ազնու-

վանանք նրա սիրո հրապույրով: Սիրենք նրան, որ եղավ մարդկային երջանկության գերագույն բարոյիչը Իր սիրո վարդապետութեամբ: Հոսիփսիմյանց կույսերի նման անպարտ պահենք Քրիստոսի բարոզած սերը սրտիս մեր կյանքի ուղեցույց, դատնալու համար Աստուծո հշմարիտ հոգևոր զավակները: Աստուծո հոգևոր զավակը լինել նշանակում է լինել քրիստոնեական բարոյականության պաշտպանը և զօրծաղորդը:

Մաղթենք, որ Հոսիփսիմյանց կույսերի մեկ ավանդ թողած քրիստոնեական բարոյականության մեծ ուժը լավագույն օրինակ լինի մեր ներկա և գալիք հայ մատաղ սերունդին, բարձր պահելով իրենց անձի, իրենց ընտանիքի, իրենց ազգի, իրենց Եկեղեցու, իրենց հարազատ Հայրենիքի փառքն ու պատիւը, և թո՛ղ ապագա սերունդները հրճվանքով գոչեն. «եկալք հուսատացեալք զճշմութիւնս սոցա հոշակեսցուք, և օրհնութեամբ զԱստուած փառաւորեսցուք»:

«Շնորհք Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ», և թո՛ղ աստվածային շողի կաթիլը անմար մնա ձեր սրտերում: Ամեն:

